մանով, վորպիկով չժողնեն անյնելու արևմտյան ձակասից կերենսակուն ողնության գնացող եշելոններին։ Հենց նույն-պիսի հանձնարարություն կենտրոնական կոմիտեն տվեց Պոլեսյելի կազմակերպությանը, վորը գտնվում էր Գոմել-լում, վորին գլուխ էր կանգնած Լ. Մ. Կադանովիչը։ Գոմելի միջուկ անցնում է յին այն եշելոնները, վորոնք գնում է յին Պետրովադի և Մոսկվայի վրա։ Պովոլոժյեյին, վորտեղ աշխատում էր ընկ. Կույրբէշվը, խնդիր արվեց, նախ, կերենսակուն թույլ չտալ ոպտագործելու տեղական կայազորները, իրկրորդ, իր ձեռքը վերցնել պարենի նախազարդարությունն ու հավաքումը հեղափոխության համար, հայ պատրաստել այն հաշվով, վորպեսզի հեղափոխության հաղթությունից հետո այդ հայն ուղարկվի Պետրովը աղ և Մոսկվա։ Յա. Մ. Սվերդլովն Ուրալի բոլցեիկներին գրեց մի նամակ, վորի մեջ առաջարկում էր Պետրովը աղ և Մոսկվայի ապստամբության անհաջողության դեպքում չարունակել սկաված զինված ապստամբությունը։ Ուրալի քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները, ինչպես Շադրինսկն էր, վորտեղ աշխատում էր Ա. Ա. Ժդանովը, զինված ջոկատներ ելին պատրաստում ապստամբության համար։ Հյուսիսային Կովկասի բոլցեիկներն ի գեմս Ս. Մ. Կիրովի առաջադրանք ստացան սպառնալիք ստեղծել Կուրանի և Դոնի համար, վորպեսզի հասրավորություն չորվի կալեդինին իր ուժերը տեղափոխելու հակահեղափոխությանը ոգնելու համար; Կենտրոնական կոմիտեյի հասուլ ապենսու ուղարկվեց Դոնբաս՝ ապստամբության համար նախազգուշացնելու ընկ. Վորոշիլովին, վորն այդ ժամանակ բոլցեիկներ կազմակերպության նախագահն էր, լրագրի խմբագիր, Լուգանսկի խորհրդի նախագահ։ Ընկ. Վորոշիլովի ձեռքումն էր կենտրոնացված վաստորեն ամբողջ իշխանությունը։ Ժամանակավոր կառավարության ներկայացուցիչներն այդ ժայռում վուչ մի գեր չելին խաղում։ Դոնբասը սպասում էր կենտրոնական կոմիտեյի ցուցումներին, լորպեսզի այդ ներկայացուցիչներին ևս վերացներ։

Ուժայի մարզում պարենավորման կոմիտեները դըտ-
ըլքում ելին և երես երի և մենչնէիկների ձեռքին, և պարզ եր,
վոր նրանք կաշխատեն սովի միջոցով խեղդել հեղափոխու-

¹ ի. Ատային, Հռկտեմբերի ուղինելում, ոռւս. հրատ. էջ 178:

թյունը: Ուստի ՈւՓայի մարզի բոլշևիկներին առաջադրանք արվեց մտնել այդ կոմիտեները, աշխատել այնտեղ, նախապատրաստել հայցը, այդ հացը բռնել եւ լուսներում, բայց եշելոնները դնել փակուղու մեջ և ուղարկել կենտրոնական կոմիտեյի պահանջով:

Բառվում գրոհի կազմակերպումը ղեկավարում ելին Ստեփան Շահումյանը, Ալյոչա Զափարիձեն և ուրիշները:

Զեր մի խոցոր մարդ, վորոն առաջադրանքներ չստանար կենտրոնական կոմիտեյից:

Բայց ինքնըստիճան հասկանալի յե, վոր գրոհի նախապատրաստման աշխատանքն առանձին լայնությամբ տարվում եր Պետրոգրադում, վորտեղ Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ աշխատում ելին ընկ. ընկ. Մոլոտովը, Կալինինը, Անդրեյեվը: Այստեղ հոկտեմբերին մշակվեց բուն յելույթի պլանը: Յենթարբվում եր հենվել կարմիր գվարդիայի վրա, վորի թիվն առ հոկտեմբեր կազմում եր 12 հազար զինված մարդ, Կոռնչտադափ և Բարթիական նավատորմիլների հեղափոխական ծովայինների վրա և Պետրոգրադի կայազորի առանձին զորաժամանակի վրա:

Հոկտեմբերի 3-ին, յերբ յելույթի նախապատրաստությունը բավական հեռու գնաց, կենտրոնական կոմիտեն վորոշեց առաջարկել Վլադիմիր Իլյիչին տեղափոխիչել Պետրոգրադի գետքերի կենտրոնին ամելի մոտ:

Կենտրոնական կոմիտեյի վորոշումը Վլադիմիր Իլյիչն ստացավ Վիբորգում, վորտեղ նա տեղափոխվեց Հելսինգությունից, Պետրոգրադին ափելի մոտիկ գտնվելու հսմար:

Մեկ որ հետո, հոկտեմբերի 5-ին, կենտրոնական կոմիտեն վորոշեց հեռանալ Նախապատրամենափ առաջին իսկ նիստից:

Կենտրոնի վորոշումն ստանալով, Լենինը հոկտեմբերի 7-ին յերեկոյան ժամանեց Պետրոգրադ: Բայց նայեց «Լենինի կյանքի հիմնական գծերը», վոր կցված են Լենինի Յերկերի XXI հատորին: Դուք այնտեղ կդանեք Վլադիմիր Իլյիչի Պետրոգրադ ժամանելու մի ուրիշ թվական, այն եւ հոկտեմբերի 9: Վո՞րտեղից եւ վերցված այս թվականը:

XXI հատորում գետեղված և Վլադիմիր Իլյիչի «Կողմ-

նակի անձի խորհուրդները» հողվածը: Լենինն իր հողվածը սկսում է այսպիսի խոսքերով: «Յես այս տողերը գրում եմ հոկտեմբերի 8-ին և քիչ հույս ունեմ, վոր դրանք արդեն 9-ին կլինեն Պիտերի ընկերների ձեռքում: Հնարավոր ե, վոր դրանք ուշանան, վորովհետեւ հյուսիսային Խորհուրդների համագումարը նշանակված է հոկտեմբերի 10-ին»:

Դրա հիման վրա յեղբակացություն ե արվել, թե հոկտեմբերի 8-ին Վլադիմիր Իլյիչը գեռ Վիբորգումն եր:

Մի ուրիշ հողվածում՝ «Նամակ» Հյուսիսային մարզի Խորհուրդների համագումարին մասնակցող բոլշևիկ ընկերներին» հողվածում մենք նորից հանդիպում ենք.

«Յես այս տողերը գրում եմ կիրակի, հոկտեմբերի 8-ին, դուք դրանք կիարդաք հոկտեմբերի 10-ից վոչ շուտ»:

Այս հողվածի ծանոթագրության մեջ կազմողն ուղղակի մատնանշում ե, վոր նամակը գրված է Վիբորգում:

Բայց Լենինի հողվածներին չի կարելի մոտենալ այդպիսի չափանիշով: Միթե կարելի յե մոռանալ, վոր Լենինն այդ նամակները գրում եր ընդհատակում և թշնամուց ջանապղաբար թաղցնում եր իր վորտեղ գտնվելը:

Թու ինչպիսի սխալ յեղբակացությունների կարելի յե հանգիւ այսպիսի մոտեցման ժամանակ, դատեցեք հետեւյալ որինակից:

Նույն XXI հատորում գետեղված է «Նամակ» ընկերներին» հողվածը, վորը մերկացնում է Զինովյեվի և Կամենիչի դավաճանությունը: Նամակում, իմիջիւ այլոց, ասված ե.

«Ինձ հաջողվեց միայն յերկուշաբթի, հոկտեմբերի 16-ին, առավոտյան տեսնել այն ընկերոջը, վորը մասնակցել եր դրա նախորդ որը մի կարևոր բոլշևիկան ժողովի Պիտերում և վորը մանրամասնարար իրազեկ դարձեց ինձ վիճաբանությունների մասին»:

Ծանոթագրությունների մեջ նշված ե, վոր այստեղ խոսք կենակոմի հոկտեմբերի 16-ի նիստի մասին ե, բայց յեթե ծիշտ հետեւնք նամակի տեքստին, ինչպես այդ արեն կազմողներն առաջին յերկու հողվածների առթիվ, ապա դուրս ե գալիս, վոր Վլադիմիր Իլյիչը հոկտեմբերի

16-ին կենտկոմի նիստում չի յեղել, վորտեղ քննարկվում էր ապստամբության հարցը: Այնինչ բոլորը դիտեն, վոր կենինը զեկուցում եւ տվել այդ նիստում:

Պարզ է, վոր Վլադիմիր Իլյիչն ապստամբությանը նվիրված իր նամակներում գրում եր այնահետ, վոր չմատներ իր վորտեղ գտնվելը:

Իսկ ի՞նչպես հաստատվեց Վլադիմիր Իլյիչի Պետրո-դրատ ժամանելու խակական թվականը: Մենք գտանք այն ֆինն մեքենավարին, վորին հանձնարարված եր Վլադիմիր Իլյիչին Վիբորդից տեղափոխել Պետրովքրադ: Նրա մոտ պահվել ելին յերկաթուղային հուշատեր-որացույցներ ամեն տարվա համար: Հուշատերերը շատ են, գրանք կուտակվել են յերկար տարիների աշխատանքի ընթացքում: Այդ որացույցներում մեքենավարն ամեն որ գրում եր, թե ինչ շոգեկառք ե ինքը վարում, դեպի ուր և այն: Թերթելով որացույցը, մենք գտանք հոկտեմբերի 7-ի թվականով մի գլուխում: «Ծերուկը ժամանեց»: Այդ գրանցումը ցույց տվինք մեքենավարին: Նա հիշեց, վոր «Ճերուկ» բառը լենինի կոռապիրատիվ մականունն եր: Այդ որը տեղափոխվել եր Լենինը:

Այնուհետև Վիբորդում իր բնակրանում լենինին թագ-ցըրած տանտիրոջ կնոջ մոտ մենք գտանք մի հուշատերը, վորի մեջ ճշտապահ Փիննուհին գրել եր խոշորագույն դեպքերը: Մեզ համար նշանակություն չունեցող դեպքերի կողմին նշված ե, վոր հոկտեմբերի 7-ին լենինը մեկնեց Պետրովքատ ժամը 4 ամբ 25 րոպեյի դնացքով: Ստուգեցինք յերկաթուղային չվացուցակով: Գտանք այդպիսի մի դնաշք, վորը Վիբորդից գնում եր Պետրովքրադ: Արդեն դրանից հետո մեզ հաջողվեց գտնել ևս մեկ վկայություն այն բանի, վոր լենինը մինչև հոկտեմբերի 9-ը յեղել և Պետրովքրադում: Գալու յերկրորդ որը լենինը հանդիպեց ընկեր Ստալինի հետ: Հանդիպումը կայացավ հոկտեմբերի 8-ին:

Այսպես ճշովեց լենինի ժամանման թվականը:

Ժամանելով Պետրովքրադ, լենինն իրազեկ դարձալ ամբողջ նախապատրաստական աշխատանքին:

Այդ մոմենտին միջազգային և ներքին իրադրության

մեջ տեղի ունեցան այնպիսի տեղաշարժեր, վորոնք կուսակցության առջև ձևով դրին զինված յելույթի հարցը:

Ամենից առաջ կիլի նավահանգստում կանգնած գերմանական նախատրումում տեղի ունեցավ ծովայինների ապօստամբություն: Հինգ կրեյսերների ծովայիններ կարմիր գրու բարձրացրին, ափ իջան՝ կայազորին ապստամբության հանձերու համար: «Նյուրնբերգ» հածանավի ծովայինները նավից դուրս նետեցին իրենց հրամանատարներին, շոգին ուժեղացնելով շարժվեցին դեպի նորվեգիա՝ ոռւսական հեղափոխությանը միանալու համար: Շրջապատված լինելով սուզանավերով ու ականակիրներով, նախն ստիպված յեղակ հանձնվել: Դատու յեղակ, շատ ծովայիններ գնդակահարվեցին: Շարժմանը մասնակցեցին գերմանական նավատարումի մոտ 10 հազար ծովայիններ: Շարժումը լուսության մատնել դժվար եր: Ույիստագում միքանի տեղեկություններ ստացվեցին: Լենինը հասկացավ, վոր միջազգային բանվոր դասակարգի այն հեղափոխական յելույթները, վոր ինքը նախադաշտակում եր և վոր մարտիկները պատրաստում ելին կորդոնի մյուս կողմում, շատ հեռու չեն: Յեթե նույնիսկ այնպիսի ուղղմատաժանակիր մի բանտում, ինչպիսին Գերմանիան և, տեղի յե ունեցել մասսայական յելույթ, կարելի յե սպատկերացնել, թե վորքան պայմանացնել նյութ և կուտակվել ամբողջ աշխարհում:

Մեր տրամադրության տակ են այժմ Պուանկարեյի հիշողությունները, տեղեկությունների ժողովածու, վոր գրաքննությունը բանել է 1917 թվականին: Այս բոլոր նյութերը հաստատում են հեղափոխական սիսուացիայի առկայությունը Ֆրանսիայում և Անդիմայում:

Խիստ փոխվեց ուժերի հարաբերակցությունը նաև յերկրի ներսում: Ամենուրեք տեղեկություններ ելին սպացվում գյուղական շարժման, ազգային-ազատագրական շարժման, բանակում տեղի ունեցող շարժման աճման մասին: Հեղափոխությունը մեկ ամսվա ընթացքում բայականին հեռու գնաց: Մյուս կողմից, հականեղափոխությունն իր միջաներն եր ձեռք առնում: Կերենսկին բացահայտեն պատրաստվում եր Պետրովքրադը հանձնել գեր-

մանացիներին, վորակեսզի գերմանական խմալերիալիստների
սապոդով խեղղեր հեղափոխությունը:

Այս նպատակով Պետրովը ապահովությունը յենթադրում է ին
դուրս բերել կայազորը, իր թե քաղաքը գերմանացիներից
պաշտպանելու համար, իսկ իրականում, կայազորը բոլշե-
վիկների ազգեցության տակից դուրս հանելու համար: Այս
ամենը այլ կերպ եր դնում զինված ապստամբության
հարցը:

Հոկտեմբերի 10-ի յերեկոյան կայացավ բոլշևիկների
կենտրոնական կոմիտեյի նիստը: Ընկ. Սվերդլովը հաղոր-
դեց հյուսիսային և արևմտյան ճակատներում տիրող
դրության մասին: Այնտեղ տրամադրությունը բոլշևիկներին:
Մինսկի կայազորը մեր կողմն է: Բայց այնտեղ հակա-
չեղափոխության կողմից ինչ-վոր բան է կատարվում:
Ստավկայի և ճակատի շտարի միջև զավտնի բանակցու-
թյուններ են տեղի ունենում: Դեռի Մինսկ են գնում կա-
զակները, աղիտացիս յե տարվում ընդդեմ բոլշևիկների:
Հստ յերեւութին, պատրաստում են չքաղաքատել և զինա-
թափ անել հեղափոխական զորքերին:

Սվերդլովից հետո ընթացիկ մոմենտի մասին դեկու-
ցումով հանդեմ յեկալ լենինը: Մանրամասնորեն կանգ
առնելով միջազգային և ներքին դրության վրա, Վլադիմիր
Իլյիչը հատկապես նշեց ապստամբության բազմակողմանի
տեխնիկական նախապատրաստման կարելությունը:

«Քաղաքականորեն, —հանրապետարի բերեց լենինը, —
դորձը միանդամայն հասունացել է իշխանության գլուխ
անցնելու համար... Պետք է խոսել տեխնիկական կողմից
մասին: Այլ է ամբողջ զործը»¹:

Լենինը զեկուցման մեջ յերկու անգամ նշեց, վոր քա-
ղաքական իրադրությունը հասունացել է և խոսքը ապըս-
տամբության բուն մոմենտի մասին է: Վլադիմիր Իլյիչն
ուղղակի առաջարկում եր «լճուական զործողություններն
սկսելու համար» ողտադրել խորհուրդների չյուսիսային
համագումարը և Մինսկի բոլշևիկների տրամադրված կա-
չամագումարը և Մինսկի բոլշևիկների տրամադրված կա-

լենինը հավատացած էր անհապաղ յելույթի անհրա-
ժեշտության մեջ, վորովհետեւ հետագա «զանդաղեցումը
մահվան և հավասար», և առաջարկում էր ոգտագործել
ամեն մի առիթ Պետրովը ապստամբություն սկսելու հա-
մար: Բայց այս բոլոր պայմաններում վճռական մարտը—
անկախ ապստամբությունն սկսելու առիթից և աեղից—
պետք է սկսվեր Պետրովը բարեկան կենտ-
րուում, այնտեղ, վորակեղ գտնվում եր հեղափոխության
ոջախը:

Լենինի համար, այսպիսով, խոսքն այժմ արդեն ապըս-
տամբության ժամկետը նշանակելու մասին էր:

Իր յեզրակացությունները լենինն առաջարկեց մի հա-
կիրձ բանաձեռվ, վորը բացառիկ պարզորոշությամբ և ցայ-
տուն կերպով շարադրում եր կուսակցության դիրքեկտիվը:

«Կենտակուն ընդունում է, վոր ինչպես ուսւական հե-
ղափոխության միջազգային դրությունը (ապստամբությու-
նը ֆերմանիայի նախատորմում իրրե համաշխարհային սո-
ցիալիստական հեղափոխության ամժան ծայրահեղ արաւ-
հայություն ամբողջ Յելիզավետիմ, այնուհետեւ իմպե-
րիալիստների սպանալիքը խաղաղությանը՝ հեղափոխու-
թյունը Ռուսաստանում խեղիկելու նպատակով), այն-
պես ել պատերազմական դրությունը (ուսւական բուր-
ժուազիայի և կերենսկու ու Ընկ. անկասկած վորոշումը
Պիտերը հանձնելու գերմանացիներին), այնպես ել պրոլե-
տարական կուսակցության մեծամասնություն ձեռք բերելը
Խորհուրդներում, —այս ամենը զյուղացիական ապստամ-
բության և ժողովրդի վստահությունը մեր կուսակցության
կողմը զառնալու (Մոսկվայի ընտրությունները) կապակ-
ցությամբ, վերջապես կոռնիլովի յերկրորդ հարձակման
ակնհայտ պատրաստությունը (զորքերի հեռացումը, Պիտե-
րից, Պիտերին կաղակներ մոտեցնելը, Մինսկը կաղակներով
չըջապատելը և այլն), —այս ամենը զինված ապստամբու-
թյունը որպակարգի հարց են դարձնում:

Այսպիսով, ընդունելով, վոր զինված ապստամբու-
թյունն անխուսափելի յե և լիովին հասունացած, կենտ-
րուն առաջարկում է կուսակցության բոլոր կաղմակերպու-

¹ Լենին, Հ. XXI, Էջ 326:

թյուններին առաջնորդվել սրանով և այս տեսակետից քննելու ընթացքում պարագաների հարցելով (Հյուսիսային մարզի Խորհուրդների համագումարի, Պիտերից գորքերը հեռացնելու, մուկվացիների և մինսկեցիների յելույթի և այլն)»¹:

Կենտրոնական կոմիտեի նիստում լենինի գեմ գուրս յեկան յերկու դաշտանաներ—կամենելը և Զինովյեվը:

Բոլենիկների կենտրոնական կոմիտեն վճռական հակա-հարված տվեց կապիտալիզմի պաշտպաններին: Անարդ կա-պիտուլանտներին վոչ վոք չպաշտպանեց: Լենինի բանա-ձեր դարձավ ամբողջ բոլենիկյան կուսակցության դիրեկ-տիվը:

Զինված ապստամբության նախապատրաստությունը վճռական Փաղի մեջ մտավ: Ամենից առաջ վորոշվեց բա-նալ խորհուրդների Հյուսիսային համագումարը, վորը կենտկոմի նիստի կապակցությամբ հոկտեմբերի 10-ից եր փոխարդում: Հոկտեմբերի 11-ին կայացավ համագումարի Փրակցիան: Այդ Փրակցիային ինֆորմացիա տվին կենտկո-մի վորոշման մասին: Այնուհետև բացվեց բուն համագու-մարը, վորն անցավ չտեսնված վողերությամբ: Նրա բո-լոր բանաձեկը վճռական գործողությունների կոչով եյին չնչում: Այդ բանաձեկն որինակ ծառայեցին նաև ուրիշ մարդացին համագումարների համար: Այնուհետև կազմա-կերպվեց ապստամբության լեռալ Խորհրդային շտաբ:

Կենտկոմի նշանավոր նիստի ճիշտ նախորյակին, հոկ-տեմբերի 9-ին, հրամաբարակվեց ժամանակավոր կառավա-րության հրամանը զորքերը քաղաքից դուրս բերելու մա-սին գերմանացիների գեմ կովելու պատրիակով, վորոնք իրք թե պատրաստվում են դեսանտ ափ հանել: Հենց նույն որը համարվեց Պետրովարդի խորհրդի Գործադիր Կոմիտեն և մեկ ձայնի մեծամասնությամբ մի կերպ անցկացրեց հե-տեւյալ բանաձեկը. «Անհրաժեշտության դեպքում Պետրո-դրադիր մատուցները պաշտպանելու նպատակով կայազորի մասերը Պետրովարդից գուրս բերելուն յեռանդուն պատ-րաստվել»:

¹ Լենին, հ. XXI, սուս. հրատ., էջ 330:

Կայաղորը դուրս բերելուն կառավարությանը ողնու-թյուն ցույց տալու նպատակով վորոշվեց ստեղծել հեղա-փոխական պաշտպանության հատուկ կոմիտե:

Մյուս որը Պետրովարդի խորհուրդը վերացրեց այդ մենշևիկյան բանաձեկը և ընդունեց մի ուրիշ բանաձեկ. «Կերենսկու կառավարությունը կործանում է յերկիրը... Պետրովարդի և յերկրի փրկությունը իշխանությունը Խոր-հուրդների ձեռքն անցնելու մեջ ե...»:

Հոկտեմբերի 12-ին Պետրովարդի խորհրդի Գործկոմի դունիակ նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվեց յեր-կուսի վորոշվեց կայազորի զորքերը դուրս չհանել, այս վորոշմանը հետեւելու համար ստեղծել Ռազմա-հեղափոխա-կան կոմիտե: Հոկտեմբերի 13-ին Պետրովարդի խորհրդի Զինվորական սեկցիան հաստատեց ռազմա-հեղափոխական կոմիտեների կազմակերպումը: Ռազմա-հեղափոխական կո-միտեն դարձավ ապստամբության խորհրդային լեզար-շտաբ:

Ապստամբության պլանի հիմքում ընկած եր Վլադի-միր իլյուչի կողմից «Մարքսիզմ և ապստամբություն» նա-մակում տրված ցուցումը: Յենթադրվում եր բացի Պետրո-գրադի զորամասերից մայրաքաղաք կանչել բալթիական ծո-վայիններ Զելսինգֆորսից, վորի համար մշակվեց հեռադրի պարմանական տեքստ՝ «ուղարկիր կանոնադրությունը»: Այդ նշանակում եր. ապստամբությունն սկսվել ե, ուղար-կեք զրահակիրներ և ծովայինների ջոկատ:

Ամեն մի ուայնում ստեղծվեցին յեռյակներ՝ խորհրդի նախագահի, ուայնի կուսակցական կազմակերպչի, ինչպես կոչվում եյին առաջ ուայկոմների քարտուղարները, և ուա-յոնի կարմիր գվարդիայի ներկայացուցչի կազմով: Այդ յեռյակները հաշվառման յենթարկեցին բոլոր զինվորական հիմնարկները, բոլոր բանկերը, իրենց ուայնների բոլոր կառավարական հիմնարկությունները: Բայտ ուայնների ճշտորեն մշակեցին, թե կարմիր գվարդիայի վո'ր ջոկատն ե դրավելու այս կամ այն հիմնարկությունը, ուայննական կարմիր գվարդիայի վո'ր զորամասն ե գնալու Սմոլնի: Կենտկոմի ներկայացուցչիները շրջագայեցին Պետրովարդի շուրջը գտնվող բոլոր հանգուցակայանները, ստուգեցին,

թե արդյոք այնտեղ ստեղծված են բոլշևիկյան կորդոններ՝ կերենսկու և շելոններին անցնել թույլ չտալու համար։ Բոլշևիկյան կազմակերպություններին հրաման տրվեց անհրաժեշտության դեպքում զինաթափ անել զինվորներին։

Մուկվան զգուշացվեց, վոր ապստամբությունը կսկսվի մոտակա որերում։ Մուկվան իր հերթին գտուշացրեց իւլանովյին, Շույային, Որեխովյին և այլն։ Ամեն մի քաղաք ճշգրիտ ցուցումներ ստացավ։ Հատուկ ծածկադիր մշակվեց բոլոր մարզային կենտրոնների հետ հարաբերություններ պահպանելու համար։

Հենց այդ որերին, հոկտեմբերի 10-ի և 15-ի միջև, կենտրոնական կոմիտեյի ցուցումով շատ մարզերում կայացան խորհուրդների մարզային համագումարներ՝ Պովոլժյանում, Սիբիրում, Ուկրաինայում, Բելոռուսիայում։ Համագումարների ճնշող մեծամասնությունը Հյուսիսային համագումարից անմիջապես հետո վորոշում կայացրեց ամբողջ իշխանությունը լիովին խորհուրդների ձեռքը տալու մասին։

Կրիտիկական մոմենտն արագ մոտենում էր։

Վաղեմիր Իլյիչն առաջարկեց հոկտեմբերի 16-ին մի անգամ ել հրավիրել կենտրոնի նիստ՝ ընդլայնված, տեղերի, արհմիությունների, բոլշևիկյան կուսակցության Պետրոգրադի և Մուկվայի կոմիտեների զինվորական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին։ Նիստը նպատակ ուներ կուսակցության լայն ըրջաններին և Պետրոգրադի կուսակցական ակտիվին ծանոթացնել ձեռք առնված միջների հետ։ Նիստը կայացավ հոկտեմբերի 16-ի յերեկոյան։ Նիստին ներկա եյին մոտ 30 մարդ։ Զեկուցողների մեծամասնությունը տեղերից հաղորդեց, վոր միություններում և բանակում տրամադրությունը շատ բարձր է, մասսաները սպասում են ապստամբության կոչին։ Վաղեմիր Իլյիչը զեկուցեց, վոր հոկտեմբերի 10-ին կենտրոնը վորոշում ընդունեց անհավաղ ապստամբության մասին։ Հաղորդեց, վոր ապստամբության դեմ արտահայտվեցին միայն Զինովյեվն ու Կամենեվը։

Վաղեմիր Իլյիչից հետո յերւյթ ունեցավ Սվերդլովը, վորը պատմեց, վոր կուսակցությունը հաշվում է 400

հազար մարդ, վորոնք չափազանց հաջող են բաշխվել։ Պետրոգրադում՝ 50 հազար, Մոսկվայում և նրա մարզում՝ 70 հազար, Ուրալում՝ 40 հազար և այլն։ Հարվածային խմբերի ձեռվ այսպիսի կենտրոնացումն ամեն կերպ բարձրացնում ե բոլշևիկյան կուսակցության դերը։ այդ կուսակցությունն իր հետեւից կտանի անհամեմատ մեծ թվով կողմանակիցներ։

Սվերդլովի յերւյթից հետո, վորը հաղորդեց այն մասին, թե ինչ նախապատրաստական միջոցառումներ են անցկացված Մուկվայում, Մինսկում, Բելոռուսիայում և մյուս մարզերում, սկսվեցին վիճարանությունները։ Վաղեմիր Իլյիչի գեմ նորից հանդես յնկան դավաճանները՝ Զինովյեվն ու Կամենեվը, այս անգամ նոր առաջարկություններով։ Այժմ նրանք չհամարձակվեցին ապստամբության գեմ դուրս դաւ, նրանք աղաջում եյին ապստամբությունը հետաձգել հինգ, յերեք որով։ Կապիտուլանտներին խորտակիչ հակահարված տվեց ընկեր Ստալինը։

«Այն, ինչ վոր առաջարկում են կամենելին ու Զինովյեվը, —ասում եր ընկեր Ստալինը, —որյեկտիվորեն հասցենում և այն բանին, վոր հակահեղափոխությունը կազմակերպվելու հնարավորություն ե ստանում։ Մենք անմերջ կնահանջները և տանուլ կտանք ամբողջ հեղափոխությունը։ Ինչո՞ւ մենք չապահովենք որը և պայմանները ընտրելու հնարավորությունը, վորպեսզի հակահեղափոխությանը կազմակերպվելու հնարավորությունը չտանք»¹։

Կենտրոնի արհամարհանքով գեն գցեց բուրժուազիայի պատվանների փաստարկները և հաստատեց վաղեմիր Իլյիչի առաջարկած բանաձեռքը։ Դրանից հետո կենտրոնական կոմիտեյի անդամներն անցան Հարևան սենյակը, և այս տեղ, վակ նիստում, վորոշվեց ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծել կուսակցական կենտրոն ընկեր Ստալինի գլխավորությամբ։

Կենտրոնական կոմիտեյի նիստը ձգձկվեց և վերջացավ հոկտեմբերի 17-ի լուսարացյին։ Կուսակցական կենտրոնի անդամները ստացան մտնել ապստամբության

1 Ստալին, Հոկտեմբերի ուղիներում, էջ 211։

խորհրդային լեզաւ կենտրոնի կազմի մեջ, այսինքն՝ Ռազմական հեղափոխական կոմիտեյի կազմի մեջ, աշխատանքը ներսից դեկավարելու համար, ապստամբության հոգին դառնալու համար։ Կուսակցական կենտրոնի անդամները ցըմբեցին կատարելու վորոշումը։ Ապստամբությունը յենթադրվում եր կատարել հոկտեմբերի 20-ից վոչ ուշ, մի որ, վորը նշանակված եր խորհուրդների Ահմադումարի համար։

կենտրոնական կոմիտեյում ջախջախոված Զինովյեվն ու Կամենեվը չլված դավաճանություն կատարեցին։ Նրանք մէնչեւկյան «Новая жизнь» լրագրում նամակ գրեցին ապատամբության հարցի կապակցությամբ իրենց տարածայնությունների մասին։ Այդ նամակն ընկալվ խմբագիր Սուլամանովի ձեռքը։ Նա նամակը տվեց իր կուռակցական ընկերներին։ Ապատամբության գաղտնիքը հայտնվեց թշնամուն։ Անմիջապես հավաքվեց մենշևկիյան Համառուսական կենտրոնական բյուրոն։ Եսերներն ու մենշևկիներն այստեղ ևեթ խորհրդակցությանը վրոշեցին։ Խորհուրդների Ա համագումարի գումարումը հետաձգել հոկտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 25-ը և առաջարկել բոլոր մարդացին կաղմակերպություններին և ամենից առաջ զինվորականներին մասնակցելու համագումարին։

Մանր-բուրժուական հակահեղափոխականների մանյովը
չափազանց պարզ եր: Եսերներն ու մենչեւիկները յենթա-
դրում եյին, վոր համագումարը մինչև հոկտեմբերի 25-ը
հետաքձնով նրանք կարող են վրորչ կազմալուծում մտցնել
հեղափոխության մարտիկների շարքերում: Մյուս կողմից,
մանյովը արված եր այն հաշվով, վորաբեսզի ողտագործեյին
հետաձգումը և համագումարը դարձնեյին եսեր-մենչեւի-
կյան: Մինչ այդ եսերներն ու մենչեւիկները համագումարին
դեմ եյին, անտեսում եյին այն, իսկ հիմա սկսեցին տեն-
դորեն նախապատրաստվել համագումարին, հույս ունենա-
լով այն իրենց ձեռքը վերցնելու:

Զինովյանի և Կամենեվի դավաճանության հետևանքով
Ժամանակավոր կառավարությունն իմացավ բոլելիկների
պատրաստությունների մասին։ Կերենսկուն Ստավկայից
հետ կանչեցին։

Հոկտեմբերի 18-ի առավոտյան մէնչելիկյան «Новая Жизнь» լրագրում տպագրվեց Զինովյևի և Կամենեվի նամակը, և լրագրի հետ միաժամանակ կայսարի գնդերում ատացվեց Պետրովյանի դինվորական ոկրուգի հրամանատարը, գլխավոր շտաբի գնդապետ Պոլկովնիկովի շտապ և միանդամայն գաղտնի հրամանի: Այդ հրամանի մեջ պահանջվում էր ընդունել հետևելայլ միջոցները. 1) խելդել ամեն տեսակի յելույթ քաղաքում, 2) զինված ապստամբության համար աղխտացիա մղողներին ձերբակալել և հանձնել ոկրուգի շտաբին, 3) քաղաքը բաժանել առանձին ռայոնների, այդ ռայոններում կազմակերպել հեծյալ և հետևակ ուղեկալներ, վորոնք պետք են ճնշելին ամեն մի հուզմունք, 4) արդեւկել բոլոր միտինգներն ու. հակաքույթները:

Բացի այդ, մոտ ընկած քաղաքներից կանչվեցին յունկերական գպրոցները։ Զմեռային պալատի կայազորը մեծացվեց և հասցվեց մինչև 1600 հոգու։ Ճակատ ուղարկվեց մի հեռագիր, զորքեր ուղարկելու պահանջով։ Ուղիղ հեռագրալրով միացան Հյուսիսային ճակատի հրամանատար գլուխը Չերեմիսովի հետ, վորը պետք է հեծելազոր և հեծանվորդներ ուղարկեր ապստամբությունը ճնշելու համար։ Քաքաղային վարչության ձեռքից վերցրին միլիցիան և այն դրին զինվորական իշխանությունների իրավասության ներքո։ Իրեն միլիցիայի մեջ գրավեցին մոտ 600 ընտիր սպաներ, վորոնք նվիրված եյին ժամանակավոր կառավարությանը։

Կարճ ասած, ձեռք առնվեցին այնպիսի միջոցներ, վոր ապստամբությունը չեղ կարող մոտակա որերում տեղի ունենալ: Յեթի բոլշևիկները յելույթ ունենային հոկտեմբերի 19—20-ին, նրանք կընկնեյին թշնամու թակարդը: Հարկ յեղալ ապստամբությունը հետաձգել: Այս ե Զինովյանի և Կամենևի գալարածանության պրակտիկ գինը:

Ապստամբության հետաձգումը, սակայն, չեր նշանակում վերացնել այն։ Հարկադրված հետաձգումը կենտրոնական կօմիտեն ուղարկործեց ուժերի ավելի լայն մոբիլիզացիայի և ավելի խնամքով նախապատրաստվելու համար։ Ամենից առաջ վերանայելեց զինված ապստամբության պլանը, այն պատճառով, վոր թշնամիները կարող ենին վորեն

Կերպ իմացած լինել այդ պլանի մանրամասնությունների մասին։ Վարոշվեց ոգտագործել վոչ միայն 12 հազար շուցակադրսամասնության, այլև նրանց թիվում ավելացնել գենքի բացակայության պատճառով կարմիր գվարդիայում չընդունված շատ հաղարավոր բանվորների հաշվին։ Հակայական քանակությամբ գենք գտնվում եր Պետրոպալվովսկի բերդում և Կրոնվերսկի արսենալում։ Արսենալին սպասարկող բանվորները Ռազմա-հեղափոխական կոմիտեյին հաղորդեցին, թե կառավարությունը Դոնի մարզ և ուղարկում ավելի քան 10 հազար հրացան։ Խոկապես, հաշվի առնելով Պետրոգրադում բոլշևիկների հաղթության հնարավորությունը, հակահեղափոխությունը նախորդ պլացղարմ պատրաստեց Դոնում, վորտեղ ուղարկվում ելին հրետանի, գնդացիքներ, հրացաններ։ Կուսակցական կենտրոնի առաջարկությամբ Պետրոպալվովսկ ուղարկվեց Ռազմա-հեղափոխական կոմիտեյի ներկայացուցիչը վորտեղ կոմիսար։ Նրա խնդիրն եր վերահսկել բերդի պարետի գործողությունները և ամենից առաջ թույլ՝ չտալ, վոր գենք փոխադրվեր Դոնի մարզը։ Բերդի պարետը արհամարհանգույ վերաբերվեց կոմիսարի հետ և հրաժարվեց ընդունել նրան։ Կոմիսարը փողոց գուրս յեկավ և ձառնի դիմեց զինանոցի զինվորներին և բանվորներին։ Կեսամյա ճառը բավական յեղավ, վորաբեազի վրդովված զինվորներու ու բանվորները կոմիսարի հետ մեկանդ վերադառնային բերդի պարետի կարինետը։ Պարետը նետվեց գեպի հեռախոսը՝ գորքերի հրամանատարին զեկուցելու համար, իսկ կոմիսարը նստեց սեղանի մոտ և սկսեց զենք բաց թողնելու որդերներ ստորագրել։ Ինչ-վոր տեղից, կարծես հողի տակից, յերևացին բռնատար մեքենաներ, նրանց վրա արագործն դարսեցին զենքերով արկղները, և հրացաններն ուղարկվեցին Պուտիլովի, Ռուտիսովի և Պետրոգրադի մյուս խոչը գործարանների հացեցով։ Այն հրացանները, վոր նախանշանակած ելին Դոնի մարզ ուղարկելու համար, բանվորների զգոնության շնորհիվ ընկան բոլշևիկների ձեռքը։

Ամբողջ կայսորն իրենց կողմը նվաճելու հսմար գընգերն ուղարկվեցին Ռազմա-հեղափոխական կոմիտեյի կո-

միսարները։ Հոկտեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը կոմիտարները յերևացին գնդերում։ Շուտով ուղարկվեցին 200 կոմիտարներ, իսկ մոտակա որերում նրանց թիվն աճեց մինչև 600։

Կոմիսարների խնդրի մեջ մտնում եր՝ մեկուսացնել հրամանատարական կազմը, դիմագրության գեպօռում—ձերբակալել նրան, յուրաքանչյուր գնդում ստեղծել հեղափոխությանը նվիրված զինվորների կողիզ, զինել նրանց և պատրաստ լինել Ռազմա-հեղափոխական կոմիտեյի ցուցումով յելույթ ունենալու։ Կոմիսարները կայսորն ամելի մոտեցրին Ռազմա-հեղափոխական կոմիտեյին։ Կայազորը վերջնականապես նվաճելու համար ստեղծվեց մշտապես գործող որգան, այն ե՝ զնդերի ներկայացուցիչների Խորհրդակցություն։ Ամեն որ յերեկոյան ժամը 6-ից զնդերի հարցուրալուր ներկայացուցիչներ դալիս ելին Սմոլի և այստեղ լսում ելին բոլշևիկյան աղիտատուլների կրակու հատերը։ Դրանից հետո ցըլում ելին իրենց գնդերը, տարածելով հեղափոխական վորկուության մթնոլորտ։ Այդ ժիջոցները հասցրին այն բանին, վոր հոկտեմբերին բոլշևիկների կողմը պայքարում ելին վոչ միայն առանձին զորքամասեր, այլ Պետրոգրադի կայսորը ճնշող մեծամասնությունը։

Կոմիսարների գործունեյության հաջողությունը թույլ այլեց զինվորական կոմիսարներ ուղարկել զինվորական ոկրուգի շտաբը, հակահեղափոխության հենց սիրուը։ Ռազմա-հեղափոխական կոմիտեյի առաջարկությամբ նրա յերեք ներկայացուցիչները ներկայացան զինվորական ոկրուգի շտաբը և հայտարարեցին, վոր վոչ մի հրաման չի կատարվի առանց Ռազմա-հեղափոխական կոմիտեյի սոսուրագության։

Պետրոգրադի զինվորական ոկրուգի հրամանատար, զինամարտուր զինամարտի գնդապիտ Պուկովնիկովը հրաժարվեց ընդունել կոմիսարներին։ Ակրուգի շտաբը հոկտեմբերի 22-ին վորձեց կոմիսարների գլուխ վրայով ուղարկել իր հրամանները։ Կես ժամից հետո Պուկովնիկովը համոզվեց, վոր բոլշևիկները կատակ չելին անում։ Պուկովնիկովի ուղարկած բոլոր հրամանները վերաբերածան հետևյալ մակա-

գրությամբ։ «Առանց Ռազմա-հեղափոխական կոմիտեի մակադրության կատարման յենթակա չե»։

Վրդովմած Պոլկովնիկովն այս մասին հայտնեց մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Կոնովալովին։ Կոնովալովը ուղացավ Զմեռային պալատ՝ զեկուցելու կերենսկուն։

Գնդերում կոմիտարներ նշանակելը և Ռազմա-հեղափոխական կոմիտեի պահանջը՝ հաստատման ուղարկել ոկրուգի շտաբի բոլոր հրամանները, կառավարությունն ընդունեց վորագես խորհուրդների կողմից իշխանությունը փաստորեն զայլթելու սկիզբ։

Ժամանակավոր կառավարությունը վերջին որերն եր ապրում աճող տաղնապի նշանաբանի տակ։ Բոլշևիկները կառավարությանը պահում եյին լարվածության վիճակում։

Բոլոր լրագրերը լիքն եյին լուրերով, «ստույգ հաղորդակրություններով», ակնարկներով, նախագուշակություններով։

«Հոկտեմբերի լույս 15-ի գիշերվա ժամը 1-ին, — գրում եր կադետական «Речь»-ը Հոկտեմբերի 15-ին, — մայրաքաղաքի միջցիայի վարչությունը զանազան կոմիսարիատներից լուր ստացավ զինված կարմիր-դվարդիականների ինչ-վոր տեղակիսությունների մասին»։

Մյուս որը հենց նույն լրագրերը գրում եր։

«Բոլշևիկները յելույթ են պատրաստում։ Առաջնաքայլմանական կեղծություն պահպանելու համար ձևացնում եյին, թե իրենք գեմ են յելույթների։ Հիմա նրանք սահմարձակվել են և վոչնչից չեն քաշվում»։

Հոկտեմբերի 18-ին հաղորդվում եր։

«Բոլշևիկները արյունոտ բնենֆիսին պատրաստվում են տենդորեն, համառորեն, հաստատակամորեն։ Զեռք են բերում զենք, մշակում են գործողության պլան, հենակետեր են գրավում»։

Հոկտեմբերի 19-ին։

«Բոլշևիկների առաջիկա յելույթին շտապ կերպով դիմում են Փարբեկաների և գործարանների բանվորները։ Հոկտեմբերի 17-ին և 18-ին զենք—հրացաններ և ատրճա-

նակներ—տրվեց բոլշևիկների գլխավոր միջնարերդի բանվորներին—Վիբորդի ռայոնի բանվորներին։ Հոկտեմբերի 18-ին զենք ստացան Մեծ և Փոքր Ոխտայի և Պուտիլովի գործարանի բանվորները»։

Հոկտեմբերի 20-ին։

«Մենք լնդհուալ մոտեցել ենք Հոկտեմբերի 20-ին, վորի հետ նոր տաղնապներ ու սպասումներ են կապում վոչմիայն Պետերբուրգը, այլև Ռուսաստանը։ Պետք եւ խոստովանել, վոր բոլշևիկներն իրավացի յեն։ Նրանք կողտապործեն բոլոր միջոցները, վորապեսզի տաղնապը պահեն հարկ յեղած բարձրության վրա, վորապեսզի սրեն սպասողական դրությունը և ջղային լարվածությունը հասցնեն այն ծայրահեղության, յերբ հրացաններն սկսում են իրենք կրակել։

Ամեն առավոտ մինիստրներն արթնանալիս իրենք իրենց հարց եյին տալիս։ արդյոք այսոր յելույթ կունենա՞ն բոլշևիկները։ Մինիստր նախագահի տեղակալ Կոնովալովը լրագրի թղթակցին պատմում եր։

«Հոկտեմբերի 16-ի որվա ընթացքում Ժամանակավոր կառավարությանը ճիշտ հայտնի չեր բոլշևիկների յելույթի որը։ Դեռ նախորյակին Ժամանակավոր կառավարությունը ստացավ հաղորդագրություններ այն մասին, վոր բոլշևիկները վճռել են յելույթ ունենալ վոչ թե 20-ին, ինչպես բոլորն եյին յենթաղբում, այլ 19-ին։ Բայց յերկութիւն, բոլշևիկներն իրենք գեռ ճշտորեն այլ հարցը չեյին լուծել»¹— միթքարում եր իրեն Կոնովալովը։

Ժամանակավոր կառավարության համար գործը բարդանում եր նրանով, վոր բոլշևիկները գրոհ եյին պատրաստում պաշտպանության անվան տակ։ Այդ բանը բոլշևիկյան տակտիկայի առանձնահատկությունն եր այդ որի բին։

«Հեղափոխությունը,—գրում եր ընկեր Ստալինը, — կարծես թե իր հարձակողական գործողությունները քուզարկում եր պաշտպանության թաղանթով, վորովեսզի ալեկարգում»։

¹ «История гражданской войны» Խմբագրության նյութերը։

և հեշտորեն իր որբեալի մեջ գրավեր անվճռական, տառամպուղ տարրերին»¹:

Այս մշտական լարվածությունը, վորի մեջ պահում էին բոլցեիկները կառավարությանը, տարընթացություն և փուլում առաջացրեց իրեն՝ կառավարության մեջ՝ ժամանակոր կառավարությունը կրիզիսից դուրս չեր գալիս։ Մերթ այս, մերթ մյուս մինիստրը հրաժարական եր տալիս։ Հրաժարական տվեց արդարադատության մինիստր Մալյանտովիչը։ Դեռ այդ դործը չելին կոծկել, յերբ զինվորական մինիստր Վերխովսկին հայտարարեց հետանալու մասին։

Կոկտեմբերի 23-ի առավոտյան Ռազմա-հեղափոխական կոմիտեն ի լուր ամենքի հայտնեց, վոր ինքը կոմիսարներ և նշանակել կայազորի բոլոր զորամասերում։ Դիմումի մեջ ասվում եր.

«Կոմիսարները, վորպես խորհրդի ներկայացուցիչներ, անձեռնմխելի յեն։ Կոմիսարներին հակադրելը նշանակում ե հակադրել բանվորների և զինվորների դեպուտատների Խորհրդին»։

Ռազմա-հեղափոխական կոմիտեյի հայտարարությունն ուժեղացրեց կառավարության տաղնապը։ Կերենսակին տեղորեն ուժեր եր քաշում զեպի Պետրովը։ Առանձնապես զգալի ուժեր ուղարկվեցին Մոսկվա։ Կասկած չկա, վոր դավաճաններից ինչ-վոր մեկը թշնամիներին ծածուկ տեղեկացրել եր Մոսկվայում յելույթ սկսելու մասին լենինի ունեցած մտադրությունը։ Կառավարության ձեռք առած միջոցները, մասնավորապես, բացատրում են մեղ, թե ինչու Մոսկվայում ապստամբությունը միքանիորուղ ձգձգվեց։ Հակահեղափոխությունը կարողացավ նախապատրաստվել։

Կերենսկու ձեռք առած շտապ միջոցները նրան թույլ ելին տալիս հուսալու, վոր զորքերը ամենամոտիկ ժամին կմոռենան։

Բայց Կերենսկին, թեկուղ և մոտավորապես, չգիտեր բոլցեիկների յելույթի թվականը։ Այսուղ ժամանակավոր

1 Ի. Ստալին, Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակական կոմիտեի մուսհատ, 1932 թ.։

կառավարության ողնության հասավ Տրոցկու դավաճանությունը։ Պետրոգրադի խորհրդում զինվորներից մեկի այն հարցին, թե բոլցեիկները ապստամբություն պատրաստում են արգյուք, Տրոցկին պատասխանեց, վոր բոլցեիկների յերեւակու և հետաձգել մինչև հոկտեմբերի 25-ը, մինչև խորհուրդների II համագումարի որը։ Կերենսկի վեհությունը պետք չկար, վորպեսզի այստեղից արթիր այն յեղանակացությունը, թե՝ յեթե հոկտեմբերի 25-ի թվականի անուն են տալիս, ապա ակնհայտ ե՝ ինչ-վոր մեկը այդ թվականի հետ ինչ-վոր մտադրություն ե կապում։ Կերենսկին վորոշում և այդ ժամկետից յերկու որով առաջ անցնել։

Կերենսակին իր մոտ կանչեց զինվորական գերատեսչության նոր նշանակված կառավարիչ գեներալ Մանիկովսկուն և հյուսիսային ճակատի գլխավոր հրաժանատար գեներալ Զերեմիսովին։ Յերկու գեներալներն ել հազորդեցին բոլցեիկների գեմ պայքարելու համար ձեռք առած միջոցների մասին։

Հոկտեմբերի 23-ին յերեկոյան Կերենսկու կարինետում կայացավ ոկրուղի շտարի պաշտոնյաների գաղտնի նիստը։ Շտարի պետ գեներալ Բագրատունին մանրամասն հաղորդեց բոլցեիկների յելույթի գեմ ձեռք առած միջոցների մասին։

Կերենսկու մոտ զորամասերի հրաժանատարների ժողովը յելույթը նշեց Հոկտեմբերի 24-ին։ Պիտին ընդունվեց և հանձնվեց գնդերի հրաժանատարներին։

Յրիեցին ուշ գիշերին։
Ֆինանսական գնդի հրաժանատարը պլանը տվեց մեքենագրովին՝ գրամեքենայի վրա բազմացնելու համար։ Մեքենագրովը մի ավելուրդ պատճեն հանեց և այն հենց նույն գիշերը հասցրեց Ռազմա-հեղափոխական կոմիտեյի ձեռքը։

Ռազմա-հեղափոխական կոմիտեն իր հերթին Տրոցկու դավաճանության պատճառով վորոշեց Հարձակումը սկսել հոկտեմբերի 24-ից վոչ ուշ։ Կերենսկու պլանի ստացված որինակը միայն հաստատեց այդպիսի վորոշման հշտությունը, վորովհետեւ պարզ դարձավ, վոր հակահեղափո-

խությունը վորձում և կանխել հեղափոխության յելույթը։ Ռազմա-հեղափոխական կոմիտեի կարգադրությամբ յուրաքանչյուր գնդից կանչվեց յերկուական կապավոր, վորոնք մնացին դիշերելու Սմոլնիում։

Հոկտեմբերի 24-ին առավոտյան ժամը 6-ին մոտ յունիկերները միլիցիայի ուղեկցությամբ մեքենաներով յեկան «Рабочий путь»-ի խմբագրատուն և ներկայացրին հոկտեմբերի 23-ի թվականով ժամանակավոր կառավարության որդերը՝ լրադիրը բռնագրավելու և խմբագրին ձերբակալելու իրավունքով։ Բանվորները հրաժարվեցին յենթարկվելու, վորովհետեւ որդերի վրա չկար Ռազմա-հեղափոխական կոմիտեի ստորագրությունը։ Լեզվակով սկսվեց։ Աղմուկի վրա սկսեցին հավաքվել ֆարբիկաներն ու գործարանները շտապող բանվորները։ Հայլաքվածների մեջ կային լրաբարդ-գլարդիականներ։ Նրանցից մեկը «Правда»-ի վրա կատարված հանկարծակի հարձակման մասին հազորդեց կուսակցության Ռոժդեստվենսկի ուժիումի քարտուղարին։ Նա և զանգահարեց ընկեր Ստալինի բնակարանը։ Ընկեր Ստալինը հարցրեց, թէ շատ են արդյոք յունիկերները։

— Շատ չեն, մեկ ու կես տասնյակ։

— Լավ, — պատասխանեց ընկեր Ստալինը, — զրահակիրներ կուղարկեմ։

Ընկեր Ստալինն անմիջապես զանգահարեց ըոլեկիներին նիվիրմած ավելի վորոշակապատ դիվիզիոնին, և միաժամանակ Ռազմա-հեղափոխական կոմիտեին նախագրուշացրեց այն մասին, վոր Կերենսկին ձեռնարկել և «Правда»-ի ջախջախումը։ Ռազմա-հեղափոխական կոմիտեն կազմակորներին ուղարկեց լիտվական գնդից յերկու հերթական վաշտ դուրս բերելու։ Վաշտերը դուրս յեկան փողոց և շարժվեցին դեպի Սմոլնի։ Տպարանի շուրջն այդ ժամանակվա ընթացքում շատ ժողովուրդ հավաքվեց, յունկերները վախեցան և մախան, վերցնելով 8 հազար որինակ լրադիր։ Տպարանին շուտով մոտեցան զինվորներ, զրահակիր։ Լրադիր սարագրումը վերսկավեց։

Առավոտյան ժամը 10-ին մոտ կերենսկին, վորը գրավել եր Ալեքսանդր III-ի սենյակները (ըստ յերևութին պատ-

քաստիկելով Նապոլեոն դառնալ, նա ընտելանում եր թագակիրների մահմակալին), իջավ ցած, ժամանակավոր կառավարության գրասենյակը։ Կերենսկին մինիստրներին հազորդեց բոլցիկների վրա գրուելու պլանի կիրառումը ակնելու մասին։ Մինիստրները կերենսկուն խորհուրդ տվին այդ լուրջությունը ունենալ Նախարարությունը, այն հայտարարությունը, վոր զորքերը ճակատից ուղարկված են, վոր հեծանվորդները Պետրոգրադում կլինեն 24-ին և նրանց ընդառաջ են զնացել վստահելի մարդիկ, կերենսկին Նախապատմենտ մեկնեց։ Այնտեղ նիստ եր։ Մինիստր Նիկիտինը, մենշևիկ, մի յերկար և տաղակալի զեկուցում եր կարդում ամբողջ յերկուում տեղի ունեցող պարենային անկարգությունների մասին։ Դերեզաները թափառում եյին կուլուարներում։ Հանկարծ յերեաց կերենսկին։ Նրա հուզված տեսքը ուշադրություն դրավեց։ Դեպուտատները սկսեցին լցվել դահլիճը։ Զենց վոր Նիկիտինն իջավ տրիբունայից, նրա տեղը զրավեց կերենսկին և միանդամից սկսեց։

— Յես պարագալոր եմ համարում այսուեղ մեջբերելու ամենից ավելի վորոշակի տեղերն այն մի շարք պրոկամացիրմաներից, վոր «Рабочий путь» լրադիր մեջ զետեղել և վորոնլող, բայց թագնված պետական հանցագործ Ռուբա-նով-Լենինը։

Կերենսկին, վորին ընդհատում եյին տեղերից լավող ձիչերը, սկսեց մեջբերել կենինի «Նամակ ընկերներին» հոդվածից այն տեղերը, վորոնց մեջ խարազմներով զավաճանելու Զինովյեվին և Կամենեվին, կենինը փաստեր եր բերում զինված յելույթի ողտին։ Իր ճառը կերենսկին ավարտեց հիստերիկորեն։

— Այսպիսով, Բուլաստանի հանրապետության ժամանակակիր խորհրդի առաջ յես պետք է Պետերուրդի բնակչության վորոշ մասի լիտկատար, պարզ, վորոշակի դրությունը հավաստեմ վորպես ապահովության դրություն։

Դաշլիճում ազմուկ սկսվեց։ Տեղերից կերենսկուց պահանջում եյին բացարարություն, թե ինչպես նա բանը մինչև յելույթը հասցրեց, ինչ միջոցներ են ձեռք առնված։

Հանկարծ աղմուկի մեջ դեպի տրիբունը տանող աստի-
ձաններով սկսեց բարձրանալ կոնցվալովը։ Նա կերենսկուն
ինչ-կոր գրություն տվեց։ Կերենսկին ջղայնացած աշքի
անցկացրեց այն և ձեռքը բարձրացրեց, ցույց տալով, թե
ցանկանում է շարունակել իր, թվում եր թե, ավարտված
ձառը։

Լուսթյուն տիրեց։ Կերենսկին շարունակեց.

—Ինձ ներկայացվեց պատճենն այն դոկումենտի, վորհ
այժմ ուղարկվում է գնդերին։

Յեզ հանդարտած դաշիճում կերենսկին կարդաց.

«Պետրոգրադի խորհրդին վատանգ և սպանուում։ Հրա-
մայում եմ գունդը դնել լիակատար մարտական պատրաս-
տության մեջ և սպասել հետագա կարգադրության։ Ամեն
մի հապաղում և հրամանը չկատարելը կհամարվի դավա-
հանություն հեղափոխության հանդեպ։ Ռազմա-հեղափո-
խական կոմիտե։»

Աներենակայելի քառս բարձրացավ։ Դեպուտատները
բունցքներով նետվեցին դեպի տրիբունան։ Կերենսկուն
մեղաղբում ելին սկսված ապստամբության մեջ։ Նրանից
պահանջում ելին ամենաշուտափույթ միջոցներ ձեռք առ-
նել։ Ժամը 2-ն անց 5 րոպե ծափահարություններով
ուղեկցվող կերենսկին, բոլոր կուսակցություններից համա-
ձայնություն ստանալով բոլշևիկների դեմ ուղած գործո-
դություններ վարելու մասին, սլացավ Զմեռային պալատ՝
ապստամբության դեմ միջոցներ ձեռք առնելու։

Ի՞նչ ծագում ուներ այն գոկումնաը, զոր կարգաց
կերենսկին։ Մինչեւ կերենսկին արտասանում եր իր հիս-
տերիկ և յերկար ճառը, Մոմոնիում հավաքվեց բոլշևիկների
կենտրոնական կոմիտեյի նիստը։ Այստեղ առանց վորեն
ճառի և ժամանակ կորցնելու վորոշից։ Զերժինսկուն՝
զրավել փոստը և հեռագրաստունը, Կրոնշտադտ ուղարկել
Պետրոգրադում գտնվող՝ Կրօնշտադտի խորհրդի յերկու
ներկայացուցիչներին, Մոսկվային նախազգուշացնել սկսվող
զինված ապստամբության մասին, զորի համար այսոր
այնտեղ ուղարկել մեկ ներկայացուցիչ, վաղը մեկ ուրի-
չին, շտարից կանչել 2 հազար կարմիր-գվարդիականների։

Բնկ։ Սվերդլովին՝ հսկողություն կազմակերպել ժամանա-
կալոր կառավարության ամեն մի քայլի վրա։

Մի խոսքով, գործի գրվեց ապստամբության միանգա-
մայն խնամքով նախապատրաստված մեքենան։

Յերբ ժամը 3-ին մոտ կերենսկու կարգադրությամբ
յունկերները յեկան կամուրջների մոտ՝ դրանք քանդելու և
բանվորական ուսյոնները կենտրոնից կարելու համար, հա-
կահեղափոխության զորքերն այնտեղ դատան կարմիր-գվար-
դիաններ, ծովայիններ, կայազորի զինվորներ, վորոնք
վաղուց ելին ուղարկվել Ռազմա-հեղափոխական կոմիտեյի
